ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2018 թվականի N 72

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2018 թվսկանի մայիսի 25-ի N 26 որոշման և Մարիաննա Փարսյանի դիմումի՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում գտնվող բնակավայրերի նշանակության 0.09777 հա բնակելի կառուցապատման հողամասի ընդլայնման համար ուղղակի վաճառքով Մարիաննա Փարսյանին օտարվող համայնքային սեփականության 0019-0009 ծածկագրի 0.02929 հա բնակավարերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր, քանի որ.
   1) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքից ելնելով՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան, այն կարող է օգտագործվել բացառապես ընդլայնվող հողամասի վրա գտնվող շենքի կամ շինության սպասարկման կամ դրանց վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով.
   2) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքի առանձնահատկություններից ելնելով՝ ընդլայնվող հողամաս տրանսպորտային միջոցներով մուտք գործելու որևիցե այլընտրանքային հնարավորություն առկա չէ, բացի օտարվող հողամասից կամ ընդլայնվող հողամաս հնարավոր է մուտք գործել բացառապես օտարվող հողամասից:
2. Մարիաննա Փարսյանին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 363790 /երեք հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր իննսուն/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 16

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2018 թվականի N 73

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Մարիաննա Փարսյանին սեփականության իրավունքով պատկանող 0020-0015 ծածկագրի (վկայական N 08082018-07-0029, 0.09777 հա) և 0019-0009 ծածկագրի 0.02929 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել միասնական 1-ին փողոց N 75 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 16

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2018 թվականի N 74

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու՝ 2014 թվականի հուլիսի 11-ի N 19-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահը 2018 թվականի օգոստոսի 19-ին օգտագործման տրամադրել համայնքի 2 փողոց 1 նրբանցք 3 շենք N 36 հասցեի բնակիչ Արման Գրիգորյանին՝ մոր քառասունքի արարողությունը կազմակերպելու նպատակով:
2. Հանձնարարել Արման Գրիգորյանին՝ վճարումը կատարել Նոր Արտամետ համայնքի ավագանու 2014 թ. հուլիսի 11-ի N 19-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափի համաձայն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 17

գ. Նոր Արտամետ